

**ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ԱՌԱՋԱՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՍՈՒԼՈՒՄ
(1991-1994թթ.)***

ԱՃԱՅ ՄԿՐՏԻՀՅԱՆ

Բանալի բառեր՝ տեղեկատվություն, պատերազմ, հակամարտություն, հայաստան-յան ճանապարհ, ճանապարհական գոտուց («Հայաստանի Հանրապետություն», «Հայք» [1]), որը կարդում էր շրջափակման մեջ գտնվող և հավաստի տեղեկատվության սպասող Հայաստանի բնակչություն:

«Մի օր ես կգրեմ այն ամենը, ինչ տեսել եմ Դարաբաղում, իսկ առայժմ...», - երբեմն այսպես էին սկսվում ռեպորտաժները պատերազմական գոտուց («Հայաստանի Հանրապետություն», «Հայք» [1]), որը կարդում էր շրջափակման մեջ գտնվող և հավաստի տեղեկատվության սպասող Հայաստանի բնակչություն:

1991 թ. տարեվերջի սկսած՝ ԼՂԴ-ի հայության և Աղրբեջանի հակամարտության հիմնահարցից տրամաբանորեն սկիզբ առնող գոյապայքարը ձեռք բերեց դասական պատերազմին հասուլ բոլոր հատկանիշները. հաղթանակներ և կորուստներ, խաղաղ բնակչության տեղահանում և ոչնչացում, շրջափակում, բռնագաղթ, տարածքների գրավում, նորագույն ռազմական տեխնիկայի կիրառում, զոհեր և վիրավորներ, ռազմագերիներ, պատանդներ, անհայտ կորածներ և «հարկադիր կանգառում հայտնված մամուլ» [2]՝ ժամանակին և իրավիճակին բնորոշ յուրահատկություններով:

Ցզնաժամային իրավիճակներում և մարտական գործողությունների ժամանակ զանգվածային լրատվության միջոցների (ՁԼՍ-ների) աշխատանքն իր առանձնահատկություններն ունի: Այդ առումով ԼՂ հակամարտությունը ՁԼՍ-ների ներկայացուցիչների համար հետխորհրդային միջավայրում, ըստ էության, առաջին փորձությունն էր: Ավելին՝ ԽՍՀՄ վլուգումից հետո հակամարտության գոտում աշխատող լրագրողները ձեռք բերեցին նոր մասնագիտացում, որը դեռ չէր ստացել ռազմական կամ արտակարգ իրավիճակների ժուռնալիստիկա անվանումը, հետևաբար նոր ժամրում աշխատելու փորձառություն ու հնտություն չունեին: Եվ հենց ծևակերպումներն էլ՝ հակամարտության գոտի, մարտական գործողությունների շրջան, շվիման գիծ և այլն, հայտնվեցին շատ ավելի ուշ [3]: Պատերազմի և խաղաղության թեմայի լուսաբանումն իր առանձնահատկություններն ունի, ինչը ոչ միայն լուրջ փորձություն էր, այլև մեծ պատասխանատվություն հայաստանյան մամուլի և լրագրողների համար: Հատերը ճակատային լրագրող դարձան իրադարձությունների զարգացումներով պայմանավորված նախապես չունեալով ճակատում կողմնորոշվելու և հակամարտություն լուսաբանելու հնտություն, մինչդեռ զգայուն կոնֆլիկտների լուսաբանումը (թարգմ.՝ “Conflict-sensitive reporting”) հատուկ պատրաստվածություն է պահանջում:

1992թ-ից հայաստանյան որոշ թերթեր ունեին սեփական թղթակիցներ Լեռնային Ղարաբաղում (Վահրամ Աղաջանյան «Ազգ», Վարդան Ղևրիկյան, Գրիգոր Բարայան «Երկիր», Նորայր Մարտության «Ազատամարտ» (նա զովկեց Ղարաբաղում, 1992 թվականին) և ուրիշներ), մինչդեռ լրագրողների աշխատանքը պատերազմի տարիներին խոչընդոտում էին շրջափակումը, հեռախոսային կապի հաճախակի ընդհատումը, էլեկտրոնային փոխանակությունը, լրացրային թղթի պաշարների սպառումը և դժվարությունների մի ամբողջ շարք, որը, անշուշտ, իր ազդեցությունն էր բողնում հրապարակումների բովանդակության վրա: Մամուլը, ըստ էության, հակամական վիճակում էր հայտնվել, մի կողմից ներկայացնում էր պատերազմական փուլ թևակիսամաժամանական շարժումը

* Հոդվածն ընդունվել է 22.02.19:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Ն.Մարտիրոսյանը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

հայաստանյան ներքաղաքական կյանքի ստվերում, մյուս կողմից՝ լսարանը օբյեկտիվ և օպերատիվ տեղեկատվության պահանջ ուներ, մի կողմից՝ սեփական թղթակիցներ էր գործողում Արցախ, մյուս կողմից՝ հրապարակումների ոճը լրագրայինից հաճախ փոխակերպվում էր գեղարվեստականի, մի կողմից՝ մարտիկների կերպարն էր ներկայացվում, շրջանառության մեջ էին դրվում նոր տերմիններ, մյուս կողմից՝ ժամրային ներ շրջանակում և վերնագրելի՝ քաղաքական իրավիճակով պայմանավորված քաղաքականություն էր տարվում, մի կողմից՝ դրական լիցքեր էր փոխանցում, տրամադրություն ու պայքարի իմաստավորում էր, մյուս կողմից՝ զոհված ու վիրավոր լրագրողների մասին տեղեկատվություն էր ներկայացվում:

Դայաստանը և ԼՂ-ը պայքարում էին խավարի, ցրտի ու սովի, շրջակակման դեմ, ինչն իր արտացոլումն էր գտնում մամուլում, միաժամանակ մամուլը հրապարակում էր տարբեր ջոկատների լուսանկարները, մարտական գործողությունների ժամանակագրությունը պատկերող քարտեզները [4] և պատերազմական իրավիճակը ներկայացնող այլ լուրեր:

Քաղաքական և ռազմական իրավիճակով պայմանավորված լրագրության խնդիրներն էլ այլ էին, թեև փաստի առկայությունը շարունակում էր մնալ կարևորագույնը, թեկուզ կրակահերթի տակ: Աշխատանքային տարրական պայմանների, առավելապես կապի բացակայության պատճառով հաճախ լրագրողների հավաքագրած տեղեկատվությունը՝ մարտական հերքական գործողության վերաբերյալ, ընթերցողին հասնում էր բավական ուշ, այն ժամանակ, երբ արդեն ավարտվել էր տվյալ մարտը և գրանցվել էր պարտություն կամ հաղթանակ: Լրագրողներն ըստ էության ազատ էին տեղեկատվության հավաքագրման գործում, բայց լուրջ խոչընդուների առաջ էին կանգնում այն տարածելու հարցում: Նման դեպքերում լրագրողները հայտնվում էին վիրավորներ կամ զոհվածներ տեղափոխող ուղղաթիռներում: «Պատահական չէ, որ նման իրավիճակներում հայ լրագրողներն իրենց մարտիկները (լրագրող ազատամարտիկ) էին համարում, ովքեր պայքարում էին զինվորական համազգեստով և մասնագիտական զենքով: Պատերազմ լուսաբանող լրագրողները երկու հակամարտող կողմերից էլ կամա ակամա դառնում էին «պատերազմի մասնակիցներ կամ հակառակորդներ» [5]: Ի դեպք շատ ծակատային լրագրողներ իրենց ռեպորտաժների դիմաց ստացվող հոնորարները փոխանցում էին ՅՅ պաշտպանության հաշվեհամարին («Յյուսիսային Արցախն անմկուն է»՝ ռեպորտաժի հեղինակ Վ. Կորիկյան [6]):

Պաշտոնական մամուլը կիսածայն տեղեկություններ էր հաղորդում ռազմի դաշտից, պաշտոնական տվյալներ ներկայացնում վիրավորների և զոհերի մասին: Միապաղաղ լրահոսում երբեմն-երբեմն էր հայտնվում «Պատերազմի իրական դեմքը» [7]: Ինչպես պաշտոնական հայտարարությունները, որոշումները, այնպես էլ պատերազմական տեղեկատվությունը «Հայաստանի Համապետություն»-ը ներկայացնում էր առանց սեփական մեկնաբանությունների, լրագրողական աշխատանքի: Որպես իշխանամետ լրատվամիջոց՝ թերթը ձեռնապահ էր մնում տեղեկատվական դաշտում ժխտողական դիրք գրավելուց: Այն, հետևելով դասական լրագրության սկզբունքներին, նախընտրում էր նյութերի մատուցման գուսակ և հավասարակշիռ ոճ՝ հենվելով հիմնականում լուրի և հաշվետվության, երբեմն՝ հարցարգորույցի ժամրերի վրա: Քանակական առումով Արցախից ստացվող լուրերը շատացան, բայց բովանդակային տեսանկյունից շարունակում էին մնալ նոյնը. դրանք հիմնականում արտատպումներ էին արևմտյան լրատվամիջոցներից, և «Արմենապես», երբեմն նաև «Նոյյան տապան» լրատվական գործակալությունների հաղորդագրություններն էին:

Այդ առումով ընդդիմադիր մամուլի տեղեկատվության աղբյուրների շրջանակն ընդլայնվում էր, գրում էին ոչ միայն թերթի սեփական կամ հատուկ թղթակիցները, այլև տեղեկություններ էին տպագրվում տարբեր տեղեկատու կենտրոններից, «Ինտերֆաքս», «Սնադք», «Ոյոթեր» լրատվական գործակալություններից, միջազգային հեղինակավոր պարբերականներից և այլն: Եթեն հակակշիռ պաշտոնական մամուլին ընդ-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

դիմադիրն ահազանգում էր երկրում ստեղծված տագնապալի իրավիճակի մասին ստեղծելով «Արցախ» մշտական խորագիրը [8], որն ուներ իր գրեթե անփոփոխ և կայուն տեղը թերթի լրատվական տարածքում: Ավելին՝ ներկայացվում էին ոչ միայն տեղեկատվական, երբեմն վերլուծական նյութեր, այլև լուսանկարներ ու հայրենասիրական քանաստեղծություններ, համառոտ ակնարկներ ու մենագրություններ, որոնք առնչվում էին դարաբարդյան հիմնահարցին ու շարժման դասերին: Նման իրապարակումները, եթե դրանք վերաբերում էին նույնիսկ Յադրութի և Մարտունու դիրքերի հետակողությանը [9], որպես կանոն, առանձնանում էին յուրահատուկ ոգով և պայքարի ու հաղթանակի մղող ուժով (այդպես էր Խոջալուի ազատագրման, Հողեր և Քարինտակ գյուղերի պաշտպանության ժամանակ) [10]: Ծատ անգամներ հաղթանակն ու կորուստը հայտնվում էին միևնույն համարում կողք կողքի:

Պատերազմական ակտիվ գործողությունների շրջանում հայաստանյան մամուլում մարմնավորվում էր հերոս ազատամարտիկի կերպար՝ ժամանակաշրջանի իրադարձություններին համապատասխան իր հոգենուավոր աշխարհով, հայրենիքի և ժողովորդի ազատագրական պայքարի անհրաժեշտության գիտակցմամբ, հանուն մեծ նպատակի մաքարելու վճռականությամբ ու գոհարերվելու պատրաստակամությամբ: Թեև այս առումով իրապարակումներն առավելապես գեղարվեստական գործեր էին, քան լրագրային: Յետաքրքրական է, որ ազատամարտիկ [11] բարը շրջանառության մեջ դրեց «Երկիր» օրաթերթը, որը լայն կիրառություն ստացավ նաև հետագայում: Արցախյան ազատագրական պատերազմի կամ դարաբաղա-ադրբեջանական գինված հակամարտության [12] մասնակից մարտիկները, որպես կանոն, մամուլի էջերում ներկայացվում էին դիմանակարային ակնարկի ժամրով: Բայց պարտադրված պատերազմի թերումով ազատամարտիկ դարձած տղաների մասին տեղեկատվությունը հաճախ մամուլում հայտնվում էր նրանց գոհվելուց հետո: Նրանց օրինակը ներկայացվում էր իրուստանք, հայրենիքի առջև ունեցած հայի պարտը [13]: Ըստ էտքան ստեղծվում էր հայ գինվորի կերպարը՝ որպես գաղափարական մարտիկ: Յայ ազատամարտիկի կերպարն աստիճանաբար նոր բովանդակություն ու գեղարվեստական կերպարվորնան ծև ստացավ, մասնավորապես «Երկիր» թերթի սյունակներում, որովհետև հենց այս թերթն էր ամենից շատ ակնարկներ տպագրում գոհված ազատամարտիկների մասին, թեև դրանք գերազանցապես կուսակցական մարտիկներին էին նվիրված:

Դարաբաղյան ռազմաճակատում հաջողությունները փոփոխական էին, քայլ 1992-ի ամառն ամենածանրն էր Յայաստանի և ԼՂ-ի համար: «Միտինգներ, երեր, կրակոցներ... զոհեր, գաղթի ծանապարիք բռնած մարդկանց խմբեր: ՅՇ, Արցախ, Աղրբեջան, պաշտոնյաների բուրն ելույթներ և այլն...»: Այդ իրավիճակում մամուլը խոստովանեց, որ «լրատվական դիվանագիտություն է անհրաժեշտ» [14]: Լրագրողները, պահապաններ և նյութի մասուցման որոշակի սկզբունքներ, փորձում էին թաքցնել հուսահատությունը, չմարելով հավատը և ընթերցողներին պատմել հերոսների ու նրանց կերտած հաղթանակների մասին [15]՝ հիմնականում ստվերում թողնելով գերիների, փախստականների և ընդհանրապես երկու կողմերի դաժանությունների մասին տեղեկատվությունը:

Աղրբեջանական և թուրքական թերթերի տարածած ապատեղեկատվությանն անդրադարնալուն գուգահեռ՝ հայաստանյան մամուլը վերանայեց սեփական լրատվության մասնավորապես հրապարակումների վերնագրերի ընտրության քաղաքականությունը: Նախորդ տարիների համենատ դրանք դարձան ավելի խորիս ու վճռական՝ «Թշնամու նոր հարձակումը հետ է շարութել» [16], «ԼՂ-ի ծյունը սառեցնում է պատերազմի կիրքը» [17], չնայած այս ամենը շարունակվում էր ներկայացվել ժամրային նեղ շրջանակով՝ հաղորդագրությունների և հարցագրույցների տեսքով: Մամուլը հիմնականում լուրի ժամրով պատմում էր տեղի ունեցող ավելածությունների, կատաղի մարտերի մասին՝ միաժամանակ ծանր օրեր ապրող հայության կյանքում փորձելով մատնանշել լուսավոր կետեր: Այս շրջանում մամուլը փորձում էր ոչ միայն ներկայացնել ստեղծված իրավիճակը, պատմել Արցախում անցկացվող հիշատակի միջոցառումնե-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

ոի, ազատագրված Մարտակերտի և այլնի մասին [18], այլև ըստ էության վերհամել «Մինչ 88-ի փետրվարը և 88-ի փետրվարից հետո» ստեղծված պատկերը, թեև նման հրապարակումները չեն առանձնանում ոչ մատուցմամբ, ոչ ծավալով, ոչ լրագրողական հմտությամբ: Ավելի՛ մամուլը պատերազմական օրագրերը ներկայացնելիս հաճախ ոչ թե լրագրային, այլ գեղարվեստական հնարքների էր դիմում. «...Մահ սփռելու ելած օդանավերից մեկը մահ գտավ...»[19] կամ «...Ողնաշարը փշրած օձի նման գալարվելով ֆշշում ու գալիս է թուրք գորքը...»[20]:

Արցախի պաշտպանական բանակի հաղթանակները հոյս էին ներշնչում և ըստ մամուլի՝ ստիպում էին ավելի մեծ հաջողությունների սպասելու. «Եվ թող խաղաղությամբ բացեն 94-ի բոլոր առավոտները, նախ զինվոր ժամապահների համար, այդու նաև բոլորին համար» [21], ու քանի որ «Մենք պարտադրված պատերազմի մեջ ենք, ու ուրեմն եկեք միավորվենք պատերազմը մեր օգտին ավարտելու զաղակարի շուրջը և զգտենք հաղթանակի»: Այս շրջանում թեև ծանր մարտերը շարունակվում էին Ղարաբաղի ողջ երկայնքով[22], սակայն մամուլում կարմիր թելի պես զգվում էր այն միտքը, որ «Ղարաբաղը հնարավոր չէ ստրկացնել» [23] և «Ղարաբաղում միայն Ղարաբաղի ծակատագիրը չի վճռվում, այլև Յայսատանի՝ մեր անբաժան ու անբաժանելի հայրենիքի»[24]: Սակայն, ներկայացնելով «Պատերազմի աղծատված կիսադեմը»[25], հայաստանյան մամուլը երբեմն դաշնում էր զգացմունքային. «Թուրքը թուրք է մնում»[26]: Թեժ մարտերը շարունակվում էին, կային նոր գրոհներ, վիրավորներ ու զոհեր, և աղբբեցանցիները փորձում էին վերադարձնել կորցրած դիրքերը, սակայն, ըստ էության ժամանակն ու մամուլը ոգևորված էր և ընթերցողներին հիշեցնում էր, որ պարտությունների կողքին մեծ հաղթանակներ ենք ունեցել, հայ ժողովրդի պատմության մեջ քիչ չեն հերոսական դրվագները, խոսում Յայ Դատի, Արամ Սանուկյանի[27] և մյուսների մասին:

1994թ. գարնան սկզբից բանակցային գործընթացում դրական տեղաշարժեր էին նկատվում, հետևաբար բոլորովին էլ պատահական չէր, որ մամուլում ակտիվորեն շրջանառվում էին ոչ թե պատերազմ, գրոհ, մարտ, այլ խաղաղություն, հանգիստ, հանդարտ իրավիճակ, անդորր բառերն ու ննան արտահայտությունները («Ո՞վ կպարզի խաղաղության ձեռքը» [28]): Իրադարձությունների նման զարգացմամբ պայմանավորված բոլորովին էլ պատահական չէր մամուլի ուրույն դերակատարումը: Ավելի՛ ակնհայտ է, որ ԶԼՍ-ները (տվյալ դեպքում մամուլը) անվիճնելի նշանակություն ունեն ինչպես ազգամիջյան կոնֆլիկտների սրման, այնպես էլ դրանց կարգավորման հաղցում: Յաճախ փորձելով փաստերը հասցնել լսարանին՝ լրագրողները անզգուշություն են ցուցաբերում ընտրված բառի, լուսանկարի, վերնագրի, ժամանությունը: Գիտակցելով տեղեկատվության հաղորդման անհրաժեշտությունը՝ ցավոք, մամուլը միշտ չէ, որ կատարում է իր գլխավոր առաքելությունը: Այս դեպքում ինչպես լուրջունը, այնպես էլ անզգուշորեն ասված բառը հղի են վտանգավոր հետևանքներով:

Յայ ժողովրդի նորօրյա պատմության ամենածակատագրական ու ամենաբարդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ ազատամարտի դաշտում կրվողների նվիրումին շատ դեպքերում համարժեք չէր հայաստանյան մամուլի, լրագրողների արձագանքը՝ հատկապես սկզբնական շրջանում: Այդուհանդեռ, լրագրողները կատարեցին իրենց աշխատանքը, ինչ-որ չափով քաղաքական գործիչների սխալները կրկնող, բայց դրա նախատակը չափազանց կարևոր էր՝ ընթերցողներին հասցնել տեղեկատվություն պատերազմի մասին: Գուցե դա նրանք արեցին ավելի կամ պակաս չափով, բայց դա նաև արդեց 5 լրագրողի կյանքի (Սերգեյ Յամբարձումյան (զոհվեց 1992թ. փետրվարի 28-ին), Ալեքսանդր Գասպարյան (զոհվեց 1991թ. դեկտեմբերի 3-ին), Արամ Զահարյան (զոհվեց 1992թ. հունիսի 30-ին), Նորայր Մարտության (զոհվեց 1993թ. հունվարի 19-ին), Արմեն Սարգսյան (զոհվեց 1993թ. հոկտեմբերի 10-ին) և 6 վիրավոր [29] լրագրողների բեկված ծակատագրերի գնով:

Արդյունքում դարաբաղյան շարժումը, որ ծագել էր Ղարաբաղի և ողջ հայության

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Կողմից, իրքև ազգային ինքնագիտակցության դրսւորում, 1994թ-ի մայիսի 12-ի զինադադարով մտավ նոր փոլ՝ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» դասագրային դարձած ծևակերպմամբ: Զինադադարի ռեժիմի մասին համաձայնությունը պահպանվում է մինչ օրս, թեև պատերազմն ամբողջությամբ չի ավարտվել, և ոչ բոլոր կրակակետերն են լրեցված: Այս համատեքստում լրագրությունն էլ անելիքներ ունի՝ առավելապես իմաստավորելով արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Журналисты на войне в Карабахе», Москва, 2002, стр. 24.
2. «Ազանգարդ», 2 մարտի, 1993:
3. «Журналисты на войне в Карабахе», стр. 24.
4. «Ազատամարտ», 20 մայիսի, 1992, Երևան:
5. «Журналисты на войне в Карабахе», стр. 23.
6. «Երկիր», 3 հոկտեմբերի, 1991:
7. «Հայաստանի Հանրապետություն», 31 հունվարի, 1992:
8. «Ազատամարտ», 1 հունվարի, 1992:
9. «Ազգ», 4 մայիսի, 1993:
10. «Երկիր», 28 հունվարի, 1992:
11. Նույն տեղում, 17 սեպտեմբերի, 1991:
12. «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-94թթ.» հանրագիտարան, Երևան, 2004, էջ 9:
13. «Երեկոյան Երևան», 24 նոյեմբերի, 1992:
14. «Հայաստանի Հանրապետություն», 30 հուլիսի, 1992:
15. «Ազատամարտ», թիվ 35, օգոստոս, 1992:
16. «Երկիր», 17 սեպտեմբերի, 1992:
17. «Ազգ», 13 հունվարի, 1993:
18. «Երեկոյան Երևան», 24 սեպտեմբերի, 1993:
19. «Հայաստանի Հանրապետություն», 29 հունվարի, 1994:
20. «Երկիր» հունվարի 13, 1994:
21. «Հայաստանի Հանրապետություն», 1 հունվարի, 1994:
22. «Ազգ», 28 հունվարի, 1994:
23. «Հայաստանի Հանրապետություն», 10 փետրվարի, 1994:
24. «Ազգ», 26 փետրվարի, 1994:
25. «Երկիր», 29 հունվարի, 1994:
26. «Հայաստանի Հանրապետություն», 23 փետրվարի, 1994:
27. «Երկիր», 28 հունվարի, 1994:
28. «Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի, 1994:
29. Տես՝ «Журналисты на войне в Карабахе», стр. 155.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատերազմական տեղեկատվությունը և դրա ներկայացման
առանձնահատկությունները հայաստանյան մանուլում
(1991-1994թ.)
Անա Մկրտիչյան

Բոլոր ժամանակներում տեղեկատվությունը բացառիկ դեր ունի պատերազմների ժամանակ: Սույն հոդվածում անդրադարձել ենք պատերազմական իրավիճակում տեղեկատվության հետ տարվող աշխատանքների բնույթին ներկայացնելով հայաստանյան մամուլում դրա մատուցման առանձնահատկությունները: 1991-1994թ. հայաստանյան մամուլը գործում էր ոչ այնքան բարենպաստ պայմաններում, թեև մամուլի վրա չափազանց մեծ ու կարևոր բազմաթիվ խնդիրներ էին դրված, այդ թվում՝ սեփական լսարանի հետ տարվող աշխատանք, որը մի կողմից՝ միտված էր հակառակորդի ապատեղեկատվությունից գերծ պահելուն, մյուս կողմից՝ ավելորդ լարվածությունը, ագրեսիան, խուճապը վաճելուն, ազգային բանակի և դրա գործողությունների լեգիտիմությունը բարձրացնելուն և այլն:

РЕЗЮМЕ

Информация о войне и ее особенности в армянской прессе
(1991-1994)
Анна Мкртичян

Ключевые слова: информация, война, конфликт, армянская пресса, журналист на линии фронта, образ борца за свободу (азатамартик), победа.

Информация всегда играет исключительную роль во время войны. В данной статье затронуты вопросы об информации в военное время, изложены особенности ее представления в армянской прессе. В 1991–1994 гг. армянская пресса работала в не благоприятных условиях, хотя были огромные и чрезвычайно важные проблемы, стоящие перед прессой, в том числе работа с собственной аудиторией, с одной стороны, чтобы удержать от дезинформации противника и, с другой– чтобы устраниТЬ избыточную напряженность, агрессию, панику, а также повысить легитимность национальной армии и ее действий и т.д.

SUMMARY

Information about the war and its features in the Armenian press
(1991-1994)
Anna Mkrtichyan

Keywords: information, war, conflict, Armenian press, journalist on the front line, image of a freedom fighter (azatamartik), victory.

Information always plays a crucial role during wartime. In this article we have touched upon issues concerning the presentation of information in wartime, esp. peculiarities of its provision in the Armenian press. From 1991 to 1994 the Armenian press was acting not in very favorable conditions though the press had a number of extremely large and important problems including work with its own audience, which on the one hand, should be aimed at keeping away from the enemy's misinformation and, on the other hand, removing excessive tension, depression, panic, as well as raising the legitimacy of the national army, its activities and etc.